ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 հունիսի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

76
(3107)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ Երեւանի քաղաքապետարանում կոռուպցիայի առնչությամբ իրականացվող ձերբակալությունները առաջիկա օրերին շարունակվելու են: Ըստ նույն իրազեկ աղբյուրների՝ քաղաքապետ Տիգրան Ավինյանի շրջապատից, քաղաքապետարանից այս անգամ իրավապահները կենտրոնացել են Երեւանի քաղաքապետարանի Ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչություն ներսում կատարվող կոռուպցիոն մեխանիզմների վրա ու, կարծես թե, արդեն կոնկրետ փաստեր են հավաքել: Քաղաքապետարանում էլ, շունչները պահած, սպասում են, թե իրավապահ մարմինները երբ կոնկրետ քայլեր կձեռնարկեն այդ ուղղությամբ:

Հիշեցնենք, որ դեռեւս փետրվարi 5-ին ՀԿԿ-ն ձերբակալեց յոթ անձի, այդ թվում՝ մի շարք բարձր պաշտոնյաների՝

- հասարակական կարգի պահպանության ծառայության ղեկավար Արամ Գյուլզադյան,
- հողի վերահսկողության վարչության պետի տեղակալ Միքայել Ղիմոյան,
- նախկին պաշտոնյաներ Ռոբերտ Դարբինյան եւ Արամ Այվազյան:

Միքայել Ղիմոյանի պատժամիջոցը հետագայում փոխվեց տնային կալանքի, մյուսները կալանավորված են:

Ապրիլին կոմունալ տնտեսության վարչության նախագահ Արսեն Կարոյանը նույնպես ձերբակալվել էր կաշառքի կասկածանքով. նրան երկու ամսով կալանավորել են:

Իսկ արդեն մայիսի 20-ին Հակակոռուպցիոն կոմիտեն քաղաքապետարանում խուզարկություն էր իրականացրել եւ քաղաքապետարանի երկու աշխատակցի ձերբակալել:

Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը պաշտոնի նշանակվել է 2023 թ. հոկտեմբերի 26-ին: Փամբուխչյանը ներկայացրել է 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիր: Համաձայն այդ հայտարարագրի՝ փոխքաղաքապետը հայտարարագրել է 2 բնակարան բազմաբնակարան շենքում, որից մեկը ձեռք է բերել 2017 թվականին, իսկ մյուսը՝ 2022 թվականին՝ հեղափոխությունից հետո, երբ նշանակվել էր ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար: Երկու բնակարաններն էլ գտնվում են Էրեբունի վարչական շրջանում: Արմեն Փամբուխչյանի հայտարարագրում խառնաշփոթ է ստեղծվում, երբ փորձում ենք հասկանալ, թե որ մեքենան երբ է գնել կամ վաճառել: Օրինակ՝ հայտարարատու տարում ներկայացված տրանսպորտային միջոցների ցանկում տարեսկզբին առկա է Ford մակնիշի մեքենա, որը ձեռք է բերվել 2008 թվականի դեկտեմբերի 16-ին: Այս մեքենան տարվա ընթացքում կարծես «անհետացել» է, քանի որ օտարված գույքերի ցանկում այն չկա, իսկ տարեվերջին պարզապես առկա չէ: Հարցական է, թե մեքենան ուր է անհետացել: Փամբուխչյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 29 մլն 500 հազար դրամ եւ 8 հազար 800 եվրո: Փոխքաղաքապետը հայտարարագրել է նաեւ էլեկտրոնային հաշիվներ եւ կրիպտոարժույթ՝ 15,000 FTN: Փամբուխչյանը հայտարարագրել է 13 հազար 650 ԱՄՆ դոլար եւ 3 մլն 500 հազար դրամ կանխիկ դրամական միջոցներ: Նրա՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 23 մլն 40 հազար դրամ, որից 20 մլն 359 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է «Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկից, իսկ 2 մլն 680 հազար դրամ եկամուտը Փամբուխչյանը ստացել է ՀՀ ՊԵԿ-ից, որը եկամտահարկի վերադարձի օրենքով հիփոթեքի մայր գումարը մարելու համար է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



Իշխանական վերնախավը համոզված է, որ առաջիկայում Վեհափառը կհրաժարվի Կաթողիկոսի բարձրագույն պաշտոնից: «Ժողովուրդ» օրաթերթի՝ իշխանությանը մոտ կանգնած աղբյուրները պնդում են, որ Վեհափառը ելք չունի, հայտնվել է մի իրավիճակում, որ պետք է «ենթարկվի» Նիկոլ Փաշինյանի պնդումներին, եւ հոգեւորականները պետք է նոր Կաթողիկոս ընտրեն: Իշխանությունն իր ամենամտերիմ շրջապատում քննարկում է իրականացրել, ու միմյանց վստահեցրել են, որ Վեհափառը ելք չի ունենալու, երբ ճնշումները օր օրի ավելանան: Իսկ եկեղեցավորները «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցում են, որ Վեհափառը վստահեցրել է թիմին, որ իրենք կհասնեն իրենց ուզածին միայն լռությամբ, ու պետք է Փաշինյանի բարձրացրած «աղմուկին» ընթացք չտալ, եւ այն աստիճանաբար շուտով կմարի: Թե որ կողմը առաջիկայում կունենա իր համար ցանկալի արդյունք, դեռեւս պարզ չէ, բայց փաստ է, որ հանրության լայն շրջանակներին կատարվողը դուր չի գալիս:

Հանրապետության դիտարկվող 10 բնակավայրերում 2025թ. մայիսին ապրիլի համեմատ սպառողական գներն աճել են 0.1-1.2%-ով (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է ք. Գյումրիում), իսկ մեկում արձանագրվել է 0.1% գնանկում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 0.1%-ով: 2025թ. մայիսին 2024թ. մայիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի 7.4%, իսկ 2025թ. ապրիլի համեմատ՝ 0.5% գնաճ: Հանրապետության դիտարկվող 9 բնակավայրերում 2025թ. մայիսին ապրիլի համեմատ սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.3-2.8%-ով (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Գյումրիում), իսկ Երեւան եւ Հրազդան քաղաքներում գրանցվել է 0.1% գնանկում: Մակարոնեղենի գինը 2025թ. մայիսին 2024թ. մայիսի համեմատ աճել է 3.2%-ով, հացինը՝ 3.9%-ով, ալյուրինը՝ 6.9%-ով, իսկ 2025թ. ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 2.6%, 0.7%, 1.6%-ով: 2025 թ. մայիսին 2024 թ. մայիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է տավարի, խոզի եւ գառան մսերի գնաճ՝ համապատասխանաբար 0.8%, 1.1%, 2.9%, իսկ 2025թ. ապրիլի համեմատ՝ 0.1%, 1.0% եւ 0.5% գնաճ: Մարգարինի եւ կարագի գները 2025 թ. մայիսին 2024 թ. մայիսի համեմատ աճել են 0.3% եւ 13.1%-ով, իսկ 2025թ. ապրիլի համեմատ՝ 0.9% եւ 0.2%-ով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿՈՒՄ», ՍԱՀԱԿՅԱՆ

Վարչապետ-եկեղեցի-պետություն հարաբերությունների, «Գոյ» թատրոնի ճակատագրի, 2026 թվականին սպասվող ընտրությունների մասին զրուցել ենք «Գոյ» թատրոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Սահակյանի հետ:

-Պարոն Սահակյան, անդրադառնանք Նիկոլ Փաշինյանի այն հայտարարությանը, որ ժողովուրդը պետք է ոտքի կանգնի եւ պայքարի վեհափառի դեմ: Դուք ի՞նչ կասեք՝ որպես ՀՀ քաղաքացի եւ որպես մշակույթի ոլորտի ներկայացուցիչ:

-Ձեր նշած անձն ո՞վ է:

-Երկրի վարչապետն է:

-Ո՞ր երկրի: Մեզ խաբել են: Չկա Հայաստանի Հանրապետության Կառավարություն: Այս ամենը լրտեսություն է: Ես ենթադրում եմ, որ այս պայքարը քրիստոնեության դեմ է: Իրենք, բանուգործը թողած, գինին խմած՝ նստած են: Այստեղ մեկնաբանության խնդիր չկա, ամեն ինչ հասկանալի է: Այո՛, ժողովուրդը պետք է դուրս գա, բայց բոլորովին այլ նպատակներով եւ բոլորովին այլ մարդկանց դեմ պայքարելու: Ղարաբաղի վաճառքից հետո մեզ դեռ ինչ-որ բան զարմացնո՞ւմ է... Էլ ինչքա՞ն կարող ենք զարմանալ: Ես ամեն ինչ անում եմ, որ այդ անուններն օրվա ընթացքում հանկարծ չլսեմ:

-Պարոն Սահակյան, եթե նրան մի կողմ թողնենք. այս ամենը ակնարկ է այն մասին, որ եկեղեցում մանկապղծություններ են տեղի ունեցե, հենց Աննա Հակոբյանն է խոսել դրա մասին: Սրա վերաբերյալ ի՞նչ կասեք:

-Ասելու ոչինչ չկա: Այս ամենը վատ է նրանց համար, ովքեր լսում են. վատ են անդրադառնում լսողների վրա միայն: Այս ամենը շարունակվում է 2018 թվականի թուրքական հեղափոխությունից հետո.... 120 հազար հոգու դարձրին գաղթական: Նրանցից լսած մեկ ճշմարիտ խոսք անգամ չենք կարող ասել:

-Պարոն Սահակյան, ի՞նչ եք կարծում, վերջին 7 տարիները ի՞նչ տվեցին ՀՀ «հպարտ քաղաքացիներին»:

-Անկում, խայտառակություն: Ես նույնիսկ մտածում եմ, որ «գնացածները», բարեբախտաբար, այս ամենը չտեսան: Ես չեմ կարող սա չնկատել, չեմ կարող չմտահոգվել երկրով, որն ամենաշատն եմ սիրում աշխարհում: Բայց շատերն այլ կերպ են ապրում, կարծեք՝ ոչինչ չի եղել, իրենց ոչինչ չի հետաքրքրում: Մենք ունենք միայն խայտառակություն, նվաստացում:

-Ի վերջո, ի՞նչ ճակատագիր է սպասվում «Գոյ» թատրոնին: Դատարանն ի՞նչ վճիռ է կայացրել:

-Մենք դիմեցինք դատարան, եւ ամսի 6-ին հրապարակվեց որոշում, թե մենք սխալ ենք, որ դիմել ենք: Այսինքն՝ 34 հոգի աշխատանքից զրկվեց:

-Փաստորեն, ձեր հայցը մերժել են:

-Այո՛: Մեզնից գողացած թատրոնն ավերել են: Դուռը փակել են, ու մենք չենք կարողանում մտնել ներս, քանդել են մեր դահլիճը, իսկ մեր ամբողջ գույքն այնտեղ է:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԱԶԱՏՈՒՄԸ ՆՈՐ ՓՈՒԼ Է ԹԵՎԱԿՈԽՈՒՄ

Ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանի հեռանալու գործընթացը նոր փուլ է թեւակոխում:

Հայտնել էինք, որ Արամ Հովհաննիսյանի եւ ՆԳՆ նախարար Արփինե Սարգսյանի վերջին լուրջ բախումը տեղի է ունեցել Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի՝ Հայաստան կատարած այցից հետո: Այդ օրերին մի խումբ քաղաքական եւ քաղաքացիական ակտիվիստներ փորձել էին բողոքի ակցիա անցկացնել արտաքին գործերի նախարարության շենքի առջեւ:

Ոստիկանության արձագանքը, ըստ իրավապաշտպանների եւ դիտորդների, եղել է անհամաչափ, ուղեկցված ուժի կիրառմամբ: Նույն այդ միջադեպի վերաբերյալ ծառայողական քննարկումը վերածվել է լարված վիճաբանության Արփինե Սարգսյանի եւ Արամ Հովհաննիսյանի միջեւ, որի ընթացքում հնչել են փոխադարձ վիրավորանքներ: Այդ դեպքը դարձել է վճռական Հովհաննիսյանի համար:

Եվ ահա, Հովհաննիսյանի հեռանալուց հետո, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցն ու «Հանուն Հանրապետության» կուսակցության նախագահ Արման Բաբաջանյանը դատի են տվել ներքին գործերի նախարարությանը եւ հայցում նշել, որ ՀՀ ներքին գործերի նախարարության ծառայողների գործողությունները, որոնք հանգեցրել են հայցվորներ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի եւ Արման Բաբաջանյանի հավաքների ազատության իրավունքի, ազատ տեղաշարժի, անմարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքների խախտմանը ոչ իրավաչափ ճանաչել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՐՁՐ ՌԵՅՏԻՆԳ

Armlur.am-ի տեղեկություններով՝ չնայած նրան, որ իշխանություններն ամեն բան անում են, որպեսզի կարողանան էջմիածին քաղաքում կրկին իրենց քաղաքապետին ունենալ, բայց, կարծես թե, ընդդիմադիր ուժերն այս պահին գերիշխող դեր ունեն:

Ըստ Armlur.am-ի աղբյուրների՝ այս օրերին էջմիածնի ավագանու «էջմիածին» կուսակցությունների դաշինքի անդամ Սեւակ Խաչատրյանն է տարբեր հանդիպումներ ունենում, քաղաքում հեղինակություն ունեցող անձանց հետ, որպեսզի հասկանա, թե ով եւ ինչ դիրքորոշում ունի:

Armlur.am-ի տեղեկություններով, կարծես թե Խաչատրյանին հաջողվել է քաղաքում վստահություն ունեցող անձանցից համաձայնություն ստանալ: Armlur.am-ի աղբյուրները նշում են նաեւ, որ էջմիածինցիները եւս մեծ վստահություն ունեն նրա նկատմամբ:

Իսկ այս ամենին զուգահեռ՝ իշխանությունները փորձում են վերականգնել վերահսկողությունը քաղաքապետի նստավայրում. նրանց «սրտի» թեկնածուն Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը հաճախ հանդիպումներ-քննարկումներ է կազմակերպում աշխատակազմի ներկայացուցիչների հետ: Մեխակյանի նպատակը մարդկանց իր կողմ ներգրավելն է, որպեսզի կարողանա ընտրություններում ձայներ հավաքել: Բայց, թե որ ուժին կհաջողվի արդյունք ունենալ, դեռ շատ վաղ է ասելը:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ԿՈՉ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը կոչ է արել հակազդելու Ռուսաստանի քաղաքացիներին, հատկապես երիտասարդներին՝ այնպիսի հիմքեր պարտադրելը, որոնք ոչնչացնում են ռուսական արժեքները:

«Կարեւոր է հակազդել մեր քաղաքացիներին, հատկապես երիտասարդներին, մեր արժեքները կործանող վերաբերմունք պարտադրելու փորձերին: Անհրաժեշտ է կոշտ արձագանքել այն մարտահրավերներին, որոնք հրահրում են ազգամիջյան եւ միջկրոնական հակամարտություններ», - ասել է նա ավանդական, հոգեւոր եւ բարոյական արժեքների պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության բարելավմանը նվիրված Անվտանգության խորհրդի նիստում:

«Ավանդական արժեքները հայտարարվում են հնացած եւ արխայիկ, մինչդեռ այսպես կոչված նեոլիբերալ, իսկ ըստ էության՝ ամբողջատիրական մոդելները «առաջ են մղվում»: Ավելին, դրանք ոչ միայն համառորեն ներդրվում են մի շարք արեւմտյան երկրներում, այլ ակտիվորեն փորձում են դրանք արտահանել աշխարհով մեկ, պարտադրել դրանք»,- նշել է ՌԴ նախագահը:

Նրա խոսքով՝ պետք է հասկանալ, որ ժամանակակից աշխարհում գլոբալ տեղեկատվական տարածությունից «սերտորեն» ցանկապատվելու փորձերը «բացարձակապես անարդյունավետ են»:

«Մենք պետք է հետեւողականորեն եւ ակտիվորեն առաջ տանենք մեր արժեքները, ձեւավորենք մեր հումանիտար մշակութային իմաստները, որոնք պահանջված են ինչպես երկրում, այնպես էլ աշխարհում»,- ընդգծել է պետության ղեկավարը:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՊԱՏՎԵՐԸ

ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը հայտնել է. «Ի կատար ածելով Նիկոլ Փաշինյանի պատվերը՝ Աննա Վարդապետյանը իմ նկատմամբ հերթական անգամ քրեական հետապնդում հարուցելու մասին միջնորդություն է ներկայացրել ԱԺ: Փաշինյանն ու Ալիեւը գործում են համադրված՝ ապահովելով Բաքվում եւ Երեւանում բեմադրված էժանագին շոուներ:

Ակնհայտ է, որ սրանց հիմնական նպատակը հանրության ուշադրության շեղումն է իրենց իսկ ձեռամբ ստեղծած Հայոց պետականությանը սպառնացող վտանգներից»:

ԻՆՉՈՒ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԸ ԼՔԵՑ ԱԻՊ-Ը

Արցախցի հասարակական-քաղաքական գործիչ Անաստաս Իսրայելյանը դադարեցրել է իր անդամակցությունն «Արցախցիների իրավունքների պաշտպանության խորհուրդում»:

«Այս որոշումը ես կայացրել եմ ոչ թե հեշտությամբ, այլ խորապես գիտակցելով իմ անցած ճանապարը եւ ունեցած մեծ պատասխանատվությունը Արցախի եւ արցախցիների հանդեպ: Այսուհետ ես եւս շարունակելու եմ իմ պայքարը՝ ամբողջությամբ ներդնելով իմ գիտելիքն ու ներուժը Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության հայրենավեր գործի մեջ: Ակնկալելով նաեւ ձեր աջակցությունը, ինչպես միշտ»,- հայտարարել է Անաստաս Իսրայելյանը:

2023 թվականից հետո իր ակտիվ գործունեությունը ծավալելով Երեւանում՝ ինչո՞ւ անակնկալ կերպով Անաստաս Իսրայելյանը որոշեց դուրս գալ Խորհրդից, փորձեցինք պարզել նրանից, սակայն նա նշեց, որ առաջիկայում հանդես է գալու մամուլի ասուլիսով եւ կտա բոլոր հարցերի պատասխանները: ArmLur.am-ի հետ զրույցում նա նաեւ նշեց, որ Խորհրդից դուրս գալու համար տեւական ժամանակ է արդեն ինչ մտածում էր:

«Ես շարունակելու եմ իմ պայքարը նոր ձեւաչափով:

Հանուն արդարության!

Հանուն արժանապատվության!

Իմ մնացած ամբողջ կյանքի տարիները ու ժամանակը ես կնվիրեմ Սուրբ Արցախին»,- եզրափակեց Անաստաս Իսրայելյանը:

ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՋՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թուրքիայի պաշտպանության նախարարությունը X սոցիալական հարթակում հայտնել է, որ թուրքական զինված ուժերի անձնակազմը մեկնել է Ադրբեջան:

Ըստ Ադրբեջանի ՊՆ-ի՝ թուրք զինծառայողները մասնակցելու են Նախիջեւանում անցկացվելիք «Անխախտելի եղբայրություն» զորավարժություններին:

Հիշեցնենք, որ հունիսի 12-19-ը Նախիջեւանում անցկացվելու են հրամանատարաշտաբային «Անխախտելի եղբայրություն» զորավարժությունները՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի զինված ուժերի մասնակցությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՎԱՐՉԱՊԵՏԻ «ԱՐՇԱՎԻՆ»

2008-ԻՆ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԻՆՉՈ՞Ւ ԷՐ «ԼԵՎՈՆ, ԼԵՎՈՆ...» ԳՈՌՈՒՄ

Վերջին օրերին Նիկոլ Փաշինյանն իր թիրախում է դահում եկեղեցին՝ դարբերաբար անդրադառնալով բարձրաստիճան հոգեւորականներին, դնդելով, որ նրանք չեն դահել իրենց կուսակրոնության ուխտը:

ArmLur.am-ի հետ զրույցում միջազգայնագետ Դավիթ Կարապետյանը, անդրադառնալով Փաշինյանի այս հայտարարություններին, նշեց հետեւյալը. «Ենթադրենք՝ կաթողիկոսն արհամարհում է պահանջը, բան չի ասում, Փաշինյանն էլ փաստեր չունի, «պարաժ» է անում, այդժամ ի՞նչ պետք է անի. Կաթողիկոսից ու ենթադրյալ զավակից թաքուն (որովհետեւ պարտադրանքով չի կարող ստիպել) մազ կամ արյուն է վերցնելու՝ ԴՆԹ թեստ անի՞: Հետո էլ անալիզի պատասխանն՞ն է հրապարակելու:

Փաշինյան, դու հասկանու՞մ ես, որ կինո ես բռնել... Ախր, պարզից էլ պարզ է, որ ապացուցելու նպատակ էլ չունես, կարեւորն այդ ինտրիգային թեզը շրջանառության մեջ դնելն ու դա սենսացիաների սիրահարների գլուխները մտցնելն է: Առավել եւս, որ ստատուսում գրել է. «Պնդում եմ, որ Գարեգին Բ կաթողիկոսը խախտել է կուսակրոնության ուխտը եւ զավակ ունի: Թող Գարեգին Բ-ն ինձ դատի տա հայտարարված արժեքներին եւ Կաթողիկոսի կարգավիճակին իր համապատասխանելիությունը ապացուցելու համար»:

ArmLur.am-ի զրուցակիցը նշում է, որ փաստեր ներկայացնելու, անուն տալու փոխարեն Փաշինյանը զուտ պնդում է կատարում ու գնդակը նետում է Կաթողիկոսի դաշտը թե՝ «հարց ունենաս՝ դատի տուր...»:

-Ախր շա՛տ հնարամիտն է, հա՛, չնայած որ, շուստրիությունը «Не прокатит»... Հիմա ո՞նց է ասածի տակից դուրս գալու: Նա նաեւ անպատասխանատու «աբիժնիկի» ու ստոր արարածի եւս մի «կլեյմո» է կենսագրականում ավելացնում՝ առավոտյան գրելով հետեւյալը. «Լեւոն Տեր-Պետրոսյանը Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների կեղծման պրակտիկայի հիմնադիրն է եւ նա իհարկե պիտի կանգնի իր նման ժողովրդատյաց կեղծարարի ու կեղծիքի կողքին»:

Ո՞նց չասեմ, որ եթե նա կեղծիքի հիմնադիրն էր, 2008-ին ինչո՞ւ էիր կոկորդդ պատռելով «Լեւո՛ն, Լեւո՛ն...» գոռում, կանգնում կողքին, ավելի ճիշտ՝ վազվզում, ցուցումները կատարում: Ի՞նչ էիր անում դու ընտրակեղծարարի հետ:

7 տարի անց տեսար նրան կաթողիկոսի մոտ ու նո՞ր հիշեցիր, որ կուռք-իդոլդ եւս կեղծարար է: Բա Քոչարյանին էիր տվել այդ կոչումը:

Ճակատագրի ինչպիսի հեգնանք. գիտեր, որ ընտրությունների կեղծման հիմնադիրն է, բայց 2008-ին, նրա կողքին կանգնած, հեղաշրջման միջոցով ուզում էր նորից բերել իշխանության, - ասաց Դավիթ Կարապետյանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՌԴ-Ն ԱՐՑԱԽԸ ՈՐՊԵՍ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԱՐԱԾՔ Է ՃԱՆԱՉՈՒՄ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Մարիա Զախարովան հայտնել է, որ չնայած ՌԴ նախագահի օգնական Վլադիմիր Մեդինսկին իր ելույթում անդրադարձել է Արցախի իրավիճակի պատմական, սոցիալական եւ մշակութային հարցերին, Ռուսաստանը ճանաչում է այդ տարածաշրջանը որպես Ադրբեջանի տարածք:

«Ռուսաստանը պաշտոնապես ճանաչում է այս տարածաշրջանը որպես Ադրբեջանի տարածք, չնայած Մեդինսկին անդրադարձել է պատմական ասպեկտին, սոցիալական եւ մշակութային առանձնահատկություններին եւ ժողովրդի ցավին»,- պարզաբանել է դիվանագետը:

Հիշեցնենք, որ Վլադիմիր Պուտինի օգնական Վլադիմիր Մեդինսկին RT հեռուստաալիքին տված հարցազրույցում ասել էր, որ «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կար վիճելի տարածաշրջան՝ Ղարաբաղը»: Արձագանքելով այս հայտարարությանը՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը նրան խորհուրդ էր տվել «չվնասել միջպետական հարաբերությունները՝ կեղծ հայտարարություններ անելով, որոնք դուրս են նրա իրավասության սահմաններից»:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

ArmLur.am-ի հետ զրույցում «Մայր Հայաստան» շարժման առաջնորդ Անդրանիկ Թեւանյանը խոսեց Դավիթ Համբարձումյանին վարչապետ առաջադրելու եւ անվստահություն հայտնելու գործընթացի մասին. «Նիկոլ Փաշինյանին հեռացնելու ցանկացած գործիքակազմում՝ այդ թվում անվստահություն հայտնելը կիրառելի է, բայց այդ ամենի համար ժողովրդի աջակցությունն է հարկավոր: Մնացածը տակտիկայի հարց է»,- ասաց Անդրանիկ Թեւանյանը:

Նշենք, որ «Պատիվ ունեմ» խմբակցությունը վարչապետի թեկնածու է առաջադրում Մասիսի համայնքապետ Դավիթ Համբարձումյանին: Այս մասին գրել է խմբակցության նախագահ Հայկ Մամիջանյանը:

«Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետական կուսակցության Գործադիր մարմնի հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցությունը սույն թվականի հունիսի 7-ին կայացած նիստում միաձայն որոշեց «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի համաձայն վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ ներկայացնել՝ որպես թեկնածու առաջադրելով Մասիս համայնքի ղեկավար, Հայաստանի Հանրապետական կուսակցության Խորհրդի անդամ Դավիթ Համբարձումյանին», - գրել է Մամիջանյանը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Այսօր, երբ հավաքական հայ ժողովուրդն անվտանգային լրջագույն մարտահրավերներ է դիմագրավում, երբ հաղթահարված չեն Հայաստանին եւ հայ ժողովրդին ուղղված գոյութենական սպառնալիքները, երբ ազգային համախմբումն ու միասնականությունը կենսական անհրաժեշտություն են, իշխող վարչախումբը բացահայտ արշավ է սկսել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, նրա Ազգընտիր Հայրապետի եւ Եպիսկոպոսաց դասի նկատմամբ»: Այս մասին հայտարարություն է տարածել ՀՅԴ Բյուրոն:

ԻՆՉԻՆ Է ՍԿՍՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻՔԱԴԵՊԻ ՊԱՏՃԱՌԸ

Արզնիի համայքապետ Ֆելիքս Միրզոեւի կողմից խնջույք է կազմակերպվել Արզնիի Avenue Arzni հյուրատանը: Հյուրատուն այլ այցելուներ են եղել Երեւանից ու եւս խնջույք են կազմակերպել: Արդյունքում, հյուրատան հյուրերը գինովցած են եղել, հայհոյանքներ են հնչել, որին միջամտել են այլ սեղաններից թե՝ դադարեցրեք: Խոսակցությունը այն աստիճանի է թեժացել, որ հասել է ծեծին ու կրակոցներին:

Հիշեցնենք, որ հունիսի 9-ին կրակոցներ էին հնչել Կոտայքի մարզում: Արզնիի «Avenue Arzni» հյուրատնից հրազենային վնասվածքով հիվանդանոց է տեղափոխվել մի քաղաքացի, կա 2 վիրավոր: Ձերբակալվածների մեջ էր համայնքի ղեկավար Ֆելիքս Միրզոեւը, որը երեկ ազատ արձակվեց:

Բերման ենթարկված անձանցից են եղել, համայնքապետ Ֆելիքս Միրզոեւից բացի, 35-ամյա Դավիթ Վանյանը, 34-ամյա Վիրաբ Վիրաբյանը, 32-ամյա Աշուր Իլյայեւը, 53-ամյա Կառլեն Սիմոնովը, 46-ամյա Արկադի Մոիսեեւը, 39-ամյա Ալբերտ Սարկիսովը:

MediaHub-ի տեղեկություններով՝ բերման ենթարկվածներից Դավիթ Վանյանը ՊՎԾ ղեկավար Ռոմանոս Պետրոսյանի քեռու տղան է, որը միաժամանակ համայնքապետի ստվերային կուրատորն է համարվում, իսկ կռվին անմիջական մասնակցություն են ունեցել Նիկոլ Փաշինյանի օգնական, նախկինում ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Միխայիլովի եղբայրը՝ Սուրեն Միխայիլովը եւ նրա որդիները: Ի դեպ, վերոնշյալ անձինք այս պահին ձերբակալված չեն, ու չի բացառվում՝ քաղաքական կապերը օգնել են նրանց «մաքրվել» գործից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԴԱՏԻՑ

Բաքվի զինվորական դատարանում ընթանում է Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի դեմ հարուցված շինծու գործերով հերթական դատական նիստը:

Նախորդ նիստը տեղի էր ունեցել հունիսի 3-ին, որի ընթացքում Ռուբեն Վարդանյանը միջնորդություն էր ներկայացրել մեղադրական եզրակացությունն իր ընտանիքին տրամադրելու հարցով եւ առարկել դատավորների կազմի դեմ:

Տեղեկացնենք, որ Արցախի ղեկավարների ու այլ պաշտոնյաների շինծու գործերը քննվում են առանձին:

Հաջորդ նիստը նշանակված է հունիսի 12-ին:

Նրանց մեղադրում են «ահաբեկչության», «ռազմական հանցագործությունների», «ցեղասպանության» եւ այլ «հանցանքների» համար:

Հիշեցնենք, որ ընդհանուր առմամբ, դատարանի առաջ կանգնելու է 15 հայ՝ Արցախի նախկին նախագահներ Արայիկ Հարությունյանը, Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ԱԺ նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը, Պաշտպանության բանակի ԶՈՒ շտաբի նախկին պետ Դավիթ Մանուկյանը, ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը,ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, քաղաքացիական անձինք՝ Վասիլի Բեգլարյանը, Էրիկ Ղազարյանը, Դավիթ Ալավերդյանը, Գուրգեն Ստեփանյանը, Լեւոն Բալայանը, Մադաթ Բաբայանը, Գարիկ Մարտիրոսյանը, Մելիքսեթ Փաշայանը:



ԲԺԻՇԿՆԵՐ ԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ

Իրավապահ համակարգը, մասնավորապես՝Հակակոռուպցիոն կոմիտեն, ուշագրավ բացահայտում է արել վարժական հավաքներից քաղաքացիների ազատելու գործընթացի մասով:

Մասնավորապես, ArmLur.am-ին հասած հավաստի տեղեկությունների համաձայն՝ վարժական հավաքներից քաղաքացիներին ազատելու համար բժշկական կենտրոնի աշխատակցիները քաղաքացիների մարմնի վրա դեղ են քսել ու նրանց մաշկը արհեստականորեն բորբոքել, որպեսզի կարողանան ազատել քաղաքացիներին վարժական հավաքներից:

ArmLur.am լրատվական կայքին հասած տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում բժշկական կենտրոնի բժիշկներ են կալանավորվել, որոնց մեկը կին բժիշկ է:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ Է ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ

Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի 1-ին վաշտի ոստիկանները Մատենադարանի մոտ ձերբակալել եւ Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչություն են տեղափոխել մայրաքաղաքի բնակիչ 24-ամյա մի երիտասարդի:

Նրա խուզարկությամբ հայտնաբերվել է 7 գրամից ավելի մարիխուանայի նմանվող զանգվածով 4 փաթեթ:

Հետագա միջոցառումներով պարզվել է, որ թմրանյութով փաթեթները նա պահել է իրացնելու նպատակով:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում զննվել են Կենտրոն վարչական շրջանի այն տարածքները, որտեղ ձերբակալվածը իրացնելու նպատակով տեղադրել էր թմրամիջոցով փաթեթներ: Հայտնաբերվել է ընդհանուր 7 գրամից ավելի մարիխուանայով լցված 3 փաթեթ:

Երիտասարդը տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր: Նախաքննությունը շարունակվում է:

ՄԵՔԵՆԱ ԳՈՂԱՑՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Շիրակի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել, որ Գյումրիի Երեւանյան խճուղում գողացել են «ՎԱԶ 2110» մակնիշի մի ավտոմեքենա: Համայնքային ոստիկանության Կումայրիի բաժնի ծառայողները, համագործակցելով մարզի պարեկների հետ, ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում հունիսի 7-ին Երեւան-Գյումրի-Բավրա ճանապարհին հայտնաբերվել է գողացված ավտոմեքենան, որի ղեկին՝Երեւանի բնակիչ 33-ամյա մի երիտասարդ էր: Վերջինս ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին: Այս մասին հյատնում են ՆԳՆ-ից:

Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է «դիազեպամ» տեսակի 3 հաբ եւ մոտ 2 գրամ թափանցիկ զանգվածով փաթեթ:

Ստուգվել է նրա սթափության աստիճանը: Պարզվել է, որ նա ալկոհոլի ազդեցության տակ է:

33-ամյա երիտասարդը կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է նախաքննական մարմին: Հանգամանքները պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունիսի 9-ից 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 99 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

7 ՀՈԳԱՆՈՑ ԱՐՑԱԽՑԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՆ ՀԱՐՑԸ ՉԻ ԼՈՒԾՎՈՒՄ

62-ամյա Գյուլխանում Բալայանին մեր թղթակիցը մի քանի օր առաջ հանդիպել է Բերդի համայնքապետարանում: Նրա 7 հոգանոց ընտանիքը բռնագաղթել է Արցախի Ասկերանի շրջանի Ռեվ գյուղից: Բալայանները մեկուկես տարի ապրում են Բերդ համայնքի սահմանամերձ Չինարի գյուղում: Գյուլիխանումը տառապում է շաքարախտ հիվանդությամբ, ամուսինը սրտի հիվանդություն ունի, նրանք ապրում են 38 տարեկան որդու, հարսի եւ անչափահաս 3 երեխաների հետ: Տանը աշխատող չկա. միայն տղան օրավարձով բանվորությունն է անում: Նրանք Չինարիում ապրում են ուրիշի տանը, մշակում տնամերձ շատ փոքր հողամասը: Բալայանները ՀՀ քաղաքացու անձնագիր ունեն: Պետական աջակցությամբ Բերդ համայնքում բնակարան ձեռք բերելու ծրագրով նրանց պետք է տրվի յուրաքանչյուրի հաշվով 5 միլիոն դրամի սերտիֆիկատ՝ ընդհանուր 35 միլիոն դրամ: Հիվանդ, հուզված Գյուլխանումը մեր թղթակցին պատմում էր, որ որքան էլ փնտրել են, հայտարարություն են տվել, 35 միլիոն դրամանոց կարգին տուն Բերդ համայնքում չեն գտել: Իրենք Բերդ համայնքի Վարագավան գյուղում 15 միլիոն դրամ գնով տուն են ցանկացել գնել, որին կից 3000 քառակուսի մետր հողամաս կա, Բալայանները մտադիր են այն մշակել, դրանից եկամուտներ ստանալ: Սակայն այդ տունը նորոգման կարիք ունի, իսկ Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ գնված բնակարանի նորոգման համար 4 միլիոն դրամից ավել չեն կարող հատկացնել: Գյուլխանումն ասաց, որ 35 միլիոն դրամից իրենք 15 միլիոն դրամով կարող են գնել Վարագավան գյուղի այդ տունը, 5 միլիոն դրամով գնել հողամաս, մնացած 10 միլիոն դրամով նորոգել տունը: Սակայն Տավուշի մարզպետարանում այդ հարցին ընթացք չեն տվել: Բալայանները ցանկանում են մնալ, ապրել Բերդ համայնքում, հավանել են Վարագավան գյուղը, իրենց տեսած տունը, սակայն բյուրակրոտական քաշքշուկների պատճառով նրանց տան հարցը չի լուծվում: Բերդի համայնքապետարանի առաջատար մասնագետի պաշտոնակատար Օլգա Ավագյանը, ով զբաղվում է Բերդ համայնքում Արցախից բռնագաղթածների ինտեգրման հարցերով, հայտնեց, որ ներկայումս Բերդ համայնքում բնակվում է 2023 թվականին Արցախից բռնագաղթած 68 ընտանիք, 248 անձ: 2023 թվականին նրանց թիվն ավելին է եղել, մի մասը հեռացել է Բերդից: Նա հայտնեց, որ պետական աջակցությամբ բնակարան ձեռք բերելու համար սերտիֆիկատ է ձեռք բերել արցախցի ընդամենը 3 ընտանիք, 2-ն այդ նպատակով դիմել են բանկեր, սակայն բանկերի հետ աշխատանքում խնդիրներ են առաջացել: Արցախցիների ոչ մի ընտանիք այդ ծրագրով Բերդ համայնքում բնակարան ձեռք չի բերել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐՁՈՒՄ Է ՊԱՅԹԵՑՆԵԼ ԵԿԵՂԵՑԻՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄՈԴԵԼՈՎ

ArmLur.am-ի հետ զրույցում ԱԺ ԲՀԿ խմբակցության նախկին դատգամավոր Արման Աբովյանը անդրադարձել է Նիկոլ Փաշինյանի հրապարակմանը՝ արված եկեղեցու մասին:

Նշենք, որ Փաշինյանը հայտարարել էր, որ «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատավոր հետեւորդներին կոչ եմ անում համախմբվել Վեհարանը սիրով եւ քրիստոնեաբար ազատելու եւ որեւէ իրապես սրբազան հոգեւորականի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու օրակարգի շուրջ»:

«Հայ Առաքելական եկեղեցու շուրջ վերջին օրերին ծավալված իրադարձությունները պատահական չեն. գործ ունենք նպատակաուղղված փորձի հետ՝ թուլացնելու եկեղեցու դերը եւ հարված հասցնելու հայկական քրիստոնեական ինքնությանը»,- ArmLur.am-ի հետ զրույցում նման տեսակետ է հայտնել քաղաքական գործիչ Արման Աբովյանը՝ մատնանշելով ներքին եւ արտաքին վտանգավոր զարգացումների կապը:

«Ես շատ լավ հասկանում եմ այս ամենի իմաստը. ուղղակի պայթեցնել մեջտեղից Հայ Առաքելական եկեղեցին: Եվ իզուր չէր, որ այս ամենը համընկավ թուրք-ադրբեջանական տանդեմի հավակնությունների հետ՝ ՀՀ տարածքի, մասնավորապես՝ Էջմիածնի նկատմամբ: Սակայն սա չէ խնդիրը: Խնդիրը այն է, որ իշխանությունը այսօր փորձում է թուրքական մոդելով առաջնորդվել: Քանի որ հիմնականում Թուրքիայում են նրանք վերահսկողության տակ պահում հայկական հոգեւորական կամ կրոնական համույթը: Դա, կարելի է ասել, ծիծաղ է առաջացնում, այս ցնցումները, որի մեջ ընկել է թավշյա իշխանությունը՝ փորձելով պայթեցնել եկեղեցին»:

Արման Աբովյանի համոզմամբ՝ փորձերը հակառակ արդյունք են տալիս:

«Հակառակ պրոցես է լինում: Իրենք գուցե տեղյակ չեն, բայց մարդիկ, ովքեր անգամ իրենց են հավակնում, նախ՝ շոկահարված են, եւ ամենակարեւորը՝ համախմբվում են եկեղեցու շուրջ, ոչ թե կիսաաղանդավոր կոչերի»:

Նրա խոսքով՝ այս ամենը կաթողիկոսի դեմ չէ. խնդիրն ավելի խորն է՝ վերաբերում է ամբողջ Հայ Առաքելական եկեղեցուն եւ հայկական քրիստոնեությանը»:

«Միգուցե մարդիկ տեղյակ չեն, որ այս ամենը կաթողիկոս փոխելով չի: Ուզում եմ հատուկ ընդգծել, որ հարվածը ոչ թե կաթողիկոսի ուղղությամբ է, այլ ընդհանուր՝ հայկական քրիստոնեության: Մինչեւ չոչնչացվի վերջին պատնեշը՝ մարդկանց անասնականացնելու եւ, ըստ էության, արեւմտյան-ադրբեջանական Հայաստան կառուցելու գործընթացը, սրանք չեն հանգստանա: Կրկնում եմ՝ փորձում են անել, բայց մարդիկ համախմբվում են եկեղեցու շուրջ»:

ՄԱՐԻԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԹՎԵՐ

ԳԻՆՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՎԱՋԵԼ Է

Վարչապետ Փաշինյանը, ով ընտանիքի հետ մասնակցել էր «Երեւանի գինու օրերին», դրա ավարտին ներկայացրել էր փաստական տվյալներ, թե քանի մարդ է մասնակցել փառատոնին.

«Հունիսի 7-ին՝ ժամը 21:00-ին, Սարյան փողոցում «Երեւանի գինու օրերին» ներկա է եղել շուրջ 12 հազար 300 մարդ»,- նշել էր նա:

Հիմա ցուցանիշներ ներկայացնենք, թե Հայաստանում որքան է կազմել գինու արտադրությունը.

2024 թվականը թեեւ խաղողագործների եւ գինեգործների համար վատ տարի չէր, բայց գինու արտադրությունը Հայաստանում նվազել էր 29%-ով:

Այս մասին տեղեկանում ենք ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տեղեկագրից, ըստ որի՝ 2023 թվականին Հայաստանում արտադրվել է շուրջ 10 մլն լիտր գինի:

Սննդամթերքի, խմիչքի եւ ծխախոտի արտադրության ծավալների մասին տվյալներն ուսումնասիրելիս 2025 թվականի հունվար-փետրվար ամիսներին ընդհանուր գինի արտադրվել է 845 600 լիտր, որից փրփրուն (շամպայն)՝ 124 600 լ, նվազել է 33,3 % նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Ընդհանուր գինիների արտադրությունը հունավր-մարտ ամիսներին հասել է 1 371 200 լիտրի, որից փրփրուն՝ 225 400 լ, ինչը համապատասխանում է 36,3 % նվազման (2024-ի համեմատ):

Այս ամենի ֆոնին՝ հպարտանալ փառատոնի մասնակիցների թվով այդքան էլ ճիշտ չէ, երբ տնտեսության այս ոլորտն աստիճանաբար անկում է ապրում, իսկ Վրաստանն արգելում է հայկական խմիչքների արտահանումը տարանցիկ երկրով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 26 պատահար, 38 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԶԳՈՒՇԱՑՐԵԼ Է

Իրանի բանակի բարձրաստիճան հրամանատարը զգուշացրել է, որ Իսլամական Հանրապետությունը «անհավանական» հարված կհասցնի թշնամիներին, եթե նրանք որեւէ տեսակի ագրեսիա ձեռնարկեն Իրանի դեմ:

«Մենք պարտավոր ենք պատրաստ լինել ցանկացած սպառնալիքի, եւ մենք արդեն լիովին պատրաստ ենք», - երկուշաբթի օրը ասել է Իրանի բանակի համակարգման գծով փոխհրամանատար, կոնտր-ադմիրալ Հաբիբոլլահ Սայարին:

«Յուրաքանչյուր ոք, ով կփորձի խախտել մեր երկրի տարածքային ամբողջականությունն ու շահերը, կարող է վստահ լինել, որ իրենց կրած վնասը գերազանցելու է նրանց երեւակայությունը», - հայտարարել է նա:

Իր խոսքում Սայարին նաեւ ընդգծել է, որ Իրանը կարողացել է զենք եւ զինամթերք արտադրել երկրի ներսում՝ չնայած պատժամիջոցներին: «Այսօր, հենվելով մեր ներքին կարողություններիվրա, մենք բավարարում ենք մեր ռազմական կարիքները», - հավելել է նա:

ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՋԵԼ Է

Աշխարհում ծնելիության մակարդակը աննախադեպ մակարդակի ընկել է, մոլորակի միլիոնավոր մարդիկ չեն կարողանում երեխաներ ունենալ տնտեսական եւ սոցիալական խնդիրների պատճառով: Այս մասին ասվում է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) զեկույցում:

Կազմակերպության մասնագետներն ուսումնասիրություն են անցկացրել 14 երկրների 14 հազար մարդկանց շրջանում, որոնք կազմում են աշխարհի բնակչության մեկ երրորդը, այդ թվում՝ ԱՄՆ-ում, Հնդկաստանում, Բրազիլիայում, Հարավային Աֆրիկայում, Ինդոնեզիայում, Մեքսիկայում, Գերմանիայում եւ մի շարք այլ երկրներում, երեխաներ ունենալու ծրագրերի վերաբերյալ: Ուսումնասիրությունը ներառել է ցածր, միջին եւ բարձր եկամուտ ունեցող մարդկանց: Հարցմանը մասնակցել են ինչպես երիտասարդներ, այնպես էլ ոչ վերարտադրողական տարիքի մարդիկ: Հարցվածներից յուրաքանչյուր հինգերորդը նշել է, որ չի կարող ունենալ ցանկալի թվով երեխաներ: Հարցվածները երեխաներ ունենալուց հրաժարվելու կամ շատ երեխաներ ունենալու հիմնական պատճառը նշել են ֆինանսական դժվարությունները եւ կյանքի բարձր արժեքը: Այլ պատճառներից են կանանց համար երեխաների խնամքի եւ զբաղվածության համատեղման դժվարությունները, անարդյունավետ բնակչության քաղաքականությունը, առողջապահական խնդիրները եւ քաղաքական անկայունությունը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

30.05.2025 թվականին՝ ժամը 12:00-ի սահմաններում, կորել է »Ձիլլի Տրանս» ՍՊ ընկերություն (ՀՎՀՀ-00254734) 4 կնիք՝ հիմնական, փաստաթղթերի համար, փաստաթղթերի համար N2, մաքսային ձեւակերպումների համար:

«ԻԴՐԱՄ» 4

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ

Առցանց առեւտրի զարգացմանը զուգահեռ ներդրվում են նաեւ վճարման նոր եղանակներ՝ ձեւավորելով նորարարական եւ հարմարավետ ֆինանսական էկոհամակարգ: Հայաստանում այս փոփոխությունների առաջամարտիկներից է «Իդրամ» ընկերությունը:

«Իդրամը» մասնակցում էր Երեւանում անցկացվող Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ միջտարածաշրջանային համագործակցության տասներորդ համաժողովին, որտեղ քննարկվող հիմնական թեմաներից մեկը էլեկտրոնային առեւտրի զարգացման ճանապարհին փոխգործակցության կարեւորությունն էր:

«Իդրամի» կոմերցիոն տնօրեն Գրիգորի Յոլյանը նշեց, որ ընկերությունն այս պահին ներկայացված է ավելի քան 25.000 առեւտրային կետերում, որոնցից 1000-ից ավելին էլեկտրոնային առեւտրի հարթակներ են թե՛ հայկական, թե՛ միջազգային. «Դասական բանկային էքվայրինգին փոխարինելու են գալիս ավելի ճկուն եւ ընդգրկուն լուծումներ, օրինակ՝ «Իդրամի» Checkout-ը: Այն առաջարկում է մուլտիֆունկցիոնալ լուծումներ, որտեղ վճարողը կարող է «Իդրամի» միջոցով կոնկրետ հարթակին կցել եւ բանկային քարտը եւ հաշիվը, նաեւ BNPL (Buy Now Pay Later)-ը՝ «Գնի՛ր հիմա, վճարի՛ր հետո» տարբերակը եւ այլ լուծումներ», - ասաց նա:

«Իդրամի» Checkout-ի միջոցով անձը վաճառակետի կայքում հնարավորություն է ստանում վճարել կամ banking.idram.am հարթակի միջոցով, կամ վճարել՝ սքանավորելով կայքում ձեւավորված QR կոդը իր Idram&IDBank հավելվածով: Իսկ որեւէ առցանց խանութի հավելվածով վճարում կատարելիս անձը ընտրում է վճարել «Իդրամով» տարբերակը, ինչից հետո ավտոմատ բացվում է «Իդրամի» հավելվածը՝ վճարման էջով, որտեղ ընդամենը պետք է ընտրել վճարման աղբյուրն ու վճարել:

Wildberries-ի միջազգային զարգացման տնօրեն Ռաֆայել Աբրահամյանը էլեկտրոնային առեւտրի զարգացման գործում կարեւոր է համարում վճարային հարթակների դերը. «Սա այն ոլորտն է, որտեղ զարգացումն անընդհատ է: Այսինքն՝ ամեն օր հայտնվում են նոր լուծումներ, որոնք պետք է ներդնել, զարգացնել եւ կիրառել: Մենք արդեն ապահովում ենք մեր գնորդների համար այն հնարավորությունը, որ նրանք կարող են պատվիրել ապրանքը եւ տեսնել գինը այն արժույթով, որը հարմար է իրենց, եւ վճարել նույն արժույթով՝ առանց մտահոգվելու տրանզակցիաների մանրամասներով», - ասաց նա:

Հայաստանում «Վայլդբերիզը» համագործակցում է նաեւ «Իդրամի» հետ:

«Իդրամի» առաջարկած լուծումները ոչ միայն ավելի արագ են, այլեւ մատչելի: Օգտվելով Rocket Line թվային ապառիկից՝ վաճառողներն ու գնորդները կարող են ավելացնել իրենց վաճառքի եւ գնումների ծավալները:

««Իդրամ» ունենալը բիզնեսի համար այսօր ժամերի հարց է՝ մի քանի էջանոց API-ի միջոցով: Ինչպես նաեւ ներդնելուց հետո արդեն «Իդրամով» վճարումներ ստանալը եւ Rocket Line թվային ապառիկով վճարումներ անելը վայրկյաններ է տեւում, ինչը հեշտացնում եւ արագացնում է գործընթացը թե՛ վաճառողների, թե՛ գնորդների համար», - ասաց «Իդրամի» կոմերցիոն տնօրեն Գրիգորի Յոլյանը:

Ի դեպ, կատարված յուրաքանչյուր վճարման դիմաց «Իդրամն» ու IDBank-ը մեկ դրամ են ուղղում «Մի դրամի ուժը» բարեգործական նախաձեռնությանը: «Իդրամը» փոխում է Հայաստանի առցանց վճարումների մշակույթը՝ ստեղծելով նոր հնարավորություններ բիզնեսների եւ սպառողների համար:

ՈՐՆ ԸՆՏՐԵԼ

ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՏԸ՝ 80,000-600,000 ԴՐԱՄԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ամառը դեռ նոր է սկսվում, բայց Հայաստանի ամենաաշխուժ հանգստյան գոտիներից մեկում՝ Ծաղկաձորում, հանգստյան համար սահմանված գնային շեմը տատանվում է:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս տարվա ամառային սեզոնին 2 անձի համար 6 օրյա հանգստի արժեքները սկսվում են 80 000 դրամից եւ կարող են հասնել մինչեւ 600.000 դրամ՝ պայմանավորված ընտրված հյուրանոցով եւ ծառայություններով:

Մասնավորապես՝

- Alpina Resort-ում վեցօրյա հանգիստը արժե 85.500 դրամ,
- «Էլեգանտ» հյուրանոցում՝ 120.000 դրամ,
- «եյթ by եյթ» հյուրանոցում՝ 197.200 դրամ,
- Multi Rest House-ում՝ 250.000 դրամ,
- Loft Tsaghkadzor-ում՝ 534.600 դրամ,
- Ararat Resort-ում՝ 222.000 դրամ,
- Kechi Hotel-ում՝ 120.000 դրամ,
- Teghenis Resort-ում՝ 230.000 դրամ,
- իսկ ամենաբարձր գինը գրանցվել է Villa Capital in Tsaghkadzor-ում, որտեղ հանգիստը արժե շուրջ 600.000 դրամ:

Շատ հյուրանոցներ նախընտրում են ներկայացնել փաթեթային գներ՝ ներառելով նախաճաշ կամ ճաշ, իսկ որոշ հյուրանոցներ առաջարկում են միայն գիշերակացի արժեքը՝ առանց սննդի: Այդ իսկ պատճառով, նույն արժեքի շրջանակում առաջարկվող ծառայությունները կարող են էապես տարբեր լինել:

Ծաղկաձորը շարունակում է մնալ զբոսաշրջիկների եւ տեղացիների նախընտրած ուղղությունը՝ հատկապես զով եղանակի, մաքուր օդի ու բնության հանգիստ մթնոլորտի շնորհիվ:

ՄԱՐԻԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

Labubu

ՓԱՓՈՒԿ ՖԻԳՈՒՐԸ ԱՐՏ-ԻՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ Է ՍՏԱՆՈՒՄ

Շատ սիրված Labubu փափուկ ֆիգուրը արտ-իրի կարգավիճակ է ստանում. սահմանափակ քանակությամբ թողարկված 13 կանաչ Labubu-ն՝ Sacai-ի կողմից պատրաստված, կաստոմային մարմնագույն կերպարներով, զուգորդած մեկ «գաղտնի» նմուշ՝ հատուկ գունային համադրությամբ, աճուրդի կհանվեն Pharrell Williams' Joopiter աճուրդի տանը հունիսի 10-18-ին: Լոտերի ցուցահանդեսը կբացվի երեքշաբթի Սեուլի Sacai Cheongdam բուտիկում:



Իրերը հոնկոնգցի նկարիչ Kasing Lung-ի Monsters շարքից են, Labubu-ի բացառիկ կանաչ շարքից, որը թողարկվել է Pop Mart-ի եւ How2work-ի հետ համագործակցությամբ: Դրանք կլինեն Joopiter-ի նոր նախագծի մի մասը, որը կներառի աճուրդ եւ սահմանափակ քանակությամբ կապսուլային հավաքածու, որը ստեղծվել է ճապոնական Sacai ապրանքանիշի կողմից՝ Seventeen K փոփ խմբի հետ համագործակցությամբ:

Նախագիծը համընկնում է Seventeen խմբի հինգերորդ ստուդիական ալբոմի՝ Happy Burstday-ի թողարկման հետ եւ նախատեսված է նրանց ստեղծագործական կապը Sacai-ի հետ նշելու համար: Աճուրդում ներառված է նաեւ Sacai-ի բացառիկ բաճկոնը, որով Seventeen-ի մասնակիցները նկարահանվել են Ֆարել Ուիլյամսի պրոդյուսերական Bad Influence տեսահոլովակում, ինչպես նաեւ խմբի 11 անդամների ստորագրությամբ մարզաշապիկը:

Բացի այդ, վաճառքի կհանվի մերչի հավաքածուն, որը մշակել է Sacai-ի կրեատիվ տնօրեն Չիտոսե Աբեն. հուդիներ, մարզաշապիկներ երկու գույնով եւ գլխարկ J-17-S նոր լոգոտիպով. դա Joopiter, Sacai եւ Seventeen խորհրդանշանների գրաֆիկական միաձուլումն է:

Աճուրդից ստացված զուտ շահույթը կփոխանցվի ՅՈՒՆԵՍԿՕ-ին:

Հիշեցնենք, որ ինչպես Seventeen-ը, այնպես էլ Ֆարել Ուիլյամսը այդ կազմակերպության բարի կամքի դեսպաններն են:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՄԵՍՍԻՆ ՉՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՌՆԱՐ». ԴՈԿՈՒ

«Բարսելոնայի» մարզական տնօրեն Դեկուն խոսել է այն մասին, որ «Բարսելոնայի» լեգենդ Լիոնել Մեսսին 2023 թվականին ՊՍԺ-ից հեռանալուց հետո տեղափոխվել է «Ինտեր Մայամի», այլ ոչ թե վերադարձել կատալոնական ակումբ: Դեկուի խոսքով՝ արգենտինացու որոշումից շահել են երկու կողմերն էլ:

«Խոսակցություններ էին գնում Սաուդյան Արաբիայի, Մայամիի մասին... Մեսսին «Բարսելոնայի» պատմության մեծագույն խաղացողն է, եւ գուցե նա այդպես էլ մնա:

Երբեմն դա անձնական է: Գուցե նա ուզում էր տեղափոխվել Մայամի: Փարիզից հետո նրա համար ամենակարեւորը իրեն վերագտնելն ու երջանիկ լինելն էր: Գուցե դա տեղի չունենար «Բարսելոնայում», քանի որ ճնշումը չափազանց մեծ կլիներ: Կարծում եմ՝ բոլորի համար ավելի լավ էր: «Բարսելոնան» շարունակեց իր ճանապարհը՝ փորձելով վերակառուցվել: Եվ Մեսսին շարունակեց իր ճանապարհը՝ խփելով գոլեր եւ վայելելով կյանքը Մայամիում», - Globo-ին ասել է Դեկուն:

2023 թվականին Մեսսին օգնեց «Ինտեր Մայամիին» նվաճել Լիգայի գավաթը, իսկ 2024 թվականին՝ նվաճել MLS-ի կանոնավոր առաջնությունը:

«ՏՈՏԵՆՀԵՄԻ» ՆՈՐ ՄԱՐԶԻՉԸ

«Բրենտֆորդի» Թոմաս Ֆրանկը կդառնա «Տոտենհեմի» նոր մարզիչը, սոցիալական ցանցերում հայտնել է ինսայդեր Ֆաբրիցիո Ռոմանոն:

Լոնդոնյան ակումբը համաձայնության է եկել 51-ամյա դանիացու հետ պայմանագրի եւ մարզչական շտաբի կազմի վերաբերյալ:

«Բրենտֆորդը» կստանա մոտավորապես 10 միլիոն ֆունտ ստեռլինգ փոխհատուցում:

«Տոտենհեմը» հունիսի 6-ին հաստատել է Անժե Պոստեկօղլուի հրաժարականը: 2024/25 մրցաշրջանում Պոստեկօղլուն «Տոտենհեմիի» հետ նվաճել է Եվրոպա լիգայի գավաթը՝ 2008 թվականից ի վեր առաջին անգամ, սակայն թիմը Պրեմիեր լիգայում զբաղեցրել է ընդամենը 17-րդ տեղը: «Բրենտֆորդը» զբաղեցրել է 10-րդ տեղը:

ԺԱՄԱՆՑ

ԿՎԵՐԱԴԱՌՆԱ ԻՐ ⇨ ԴԵՐԻՆ

Ֆրանչայզի վերջին՝ «Կարիբյան ծովի ծովահենները. Մեռյալները հեքիաթներ չեն պատմում» ֆիլմից անցել է ութ տարի, եւ, կարծես, Օռլանդո Բլումը պատրաստ է կրկին «ծով դուրս գալ»:

Դերասանը, որը հայտնի դարձավ «Մատանիների տիրակալը» ֆիլմում էլֆ Լեգոլասի դերով, հետագայում դարձավ հանդիսատեսի սիրելին՝ որպես Ուիլ Թըրներ՝ ազնվական ծովահեն եւ Ջեք Սփերոուի դաշնակից: Այժմ նա կրկին հետաքրքրություն է հայտնել ֆրանշիզա վերադառնալու հարցում, թեեւ առանց շատ մանրամասների:

Բլումը վերջերս հայտնվել է «This Morning»-ում՝ խոսելու իր նոր «Deep Cover» ֆիլմի մասին, որտեղ նաեւ նկարահանվել են Բրայս Դալաս Հովարդը եւ Նիք Մոհամմեդը: Հարցազրույցի ժամանակ դերասանին հարցրել են «Կարիբյան ծովի ծովահենները» ֆիլմի ապագայի մասին:

«Անկեղծ ասած՝ ես ոչինչ հաստատ չգիտեմ», - խոստովանել է Բլումը: «Բայց ես կցանկանայի վերադառնալ: Դա իմ կարիերայի եւ կյանքի անհավանական մասն էր»:

Ֆրանչայզի վեցերորդ ֆիլմի հարցը քննարկվել է երկար տարիներ: Վերջին հաղորդագրությունների համաձայն՝ Disney-ը քննարկում է նախագծի վերսկսման հարցը՝ հնարավոր է՝ առանց Ջոնի Դեփի՝ որպես Ջեք Ճնճղուկ: Պրոդյուսեր Ջերի Բրուքհայմերը անցյալ տարի ակնարկել էր, որ զուգահեռաբար մշակվում են երկու ֆիլմեր՝ մեկը՝ Դեփի մասնակցությամբ, մյուսը՝ առանց նրա:

Ստուդիայից դեռեւս պաշտոնական հաստատում չկա, բայց երկրպագուների եւ դերասանների հետաքրքրությունը պաշտամունքային ֆրանշիզայի վերադարձի նկատմամբ, կարծես, միայն աճում է:



ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Amazon-ը ներկայացրել է «The Pickup» («Ինկասատորները») երգիծական մարտաֆիլմի պաշտոնական թրեյլերը՝ Էդի Մըրֆիի եւ Փիթ Դեւիդսոնի մասնակցությամբ՝ գլխավոր դերերում: Ֆիլմի պրեմիերան տեղի է ունենալու 2025թ. օգոստոսի 6-ին Prime Video-ում:

Սյուժեի կենտրոնում Ռասելն (Մըրֆի) ու Թրեւիսն (Դեւիդսոն) են, ինկասատորների մեքենայի՝ բնավորությամբ միանգամայն տարբեր երկու վարորդները: Նրանց ամենօրյա աշխատանքը հանկարծ վերածվում է մահացու վտանգավոր արկածախնդրության, երբ նրանց վրա հարձակվում են զինված կողոպտիչները, որոնց գլխավորում է խարիզմատիկ հանցագործը՝ Ջոի անունով (Կիկի Փալմեր):

Ճակատագրի հեգնանքով Ջոին Թրեւիսի նախկին ընկերուհին է, եւ նրա մտահղացումները հեռու են սովորական թալան լինելուց: Խաղադրույքը 60 մլն դոլարն է, Ռասելի կնոջ (Եվա Լոնգորիա) կյանքը եւ, գուցե, հենց գլխավոր հերոսների ողջ մնալու հավանականությունը:

Իրավիճակն արագ դուրս է գալիս վերահսկողությունից, իսկ թրեյլերը խոստանում է համադրել սրամիտ հումորը, անհաջող որոշումներն ու լարված էքշընը: Ռեժիսորը Թիմ Սթորին է՝ «Վարսավիրանոց» եւ «Համադասարանցիները ճանապարհին» հիթերի հեղինակը: Դերասանական կազմում ընդգրկված են նաեւ Ջեք Քեսին, Մարշոն Լինչը, Ռոման Ռեյնսը եւ Էնդրյու Դայս Քլեյը:

● Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում հունիսի 13-ին տեղի կունենա «Համլետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000-6000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ով իրավունք ունի ստանալու սոցիալական նպաստ, եւ ինչպես է հաշվարկվում ընտանեկան նպաստի չափը:

Լենա Մովսիսյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, մինչեւ 18 տարեկան անդամ չունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից: Միաժամանակ հայտնում ենք, որ նպաստի չափը հաշվարկվում է՝ ընտանեկան նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի կազմում գտնվող եւ ընտանիքի բնակության վայրում փաստացի բնակվող, 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նկատենք, որ ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, մինչեւ 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ կարգով է իրականացվում ամուսնալուծությունը եւ դրա պետական գրանցումը:

Սոնա Մկրտումյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ամուսնալուծության պետական գրանցման հիմքերն են՝

1. ամուսինների համատեղ դիմումը՝ փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության պետական գրանցում կատարելու համար,
2. ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսին դատարանը ճանաչել է անհայտ բացակայող կամ անգործունակ, կամ մյուսը դատարանի դատավճռով դատապարտվել է ազատազրկման,
3. ամուսիններից մեկի դիմումը եւ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում:

Ամուսնալուծության պետական գրանցման դիմում կարող է ներկայացվել, եթե՝

1) ամուսնությունը, որը լուծվում է, գրանցվել է Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ մարմիններում կամ Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում,

2) ամուսնությունը, որը լուծվում է, գրանցել է օտարերկրյա պետությունը, եւ Հայաստանի Հանրապետությունն իրավասու է լուծելու այդ ամուսնությունը երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրի հիման վրա:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության պետական գրանցումը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Դիլիջան քաղաքում

Դիլիջանը դարձել է Հնդկաստան. նախիրները միջպետական ճանապարհին են:

Համայնքի Հովք, Հաղարծին գյուղերի տարածքներում հաճախ կարելի է տեսնել առանց հսկողության նախիրների, երամակների, որոնք ճանապարհին վթարային իրավիճակներ են ստեղծում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+10 + 12 +20 + 24
Կոտայքի լեռներ	+11 + 13 +19 + 22
Կոտայքի նախալեռներ	+13 + 15 +26 + 28
Գեղարքունիք	+12+ 16 +19 + 22
Լոռի	+14 + 19 +24 + 26
Տավուշ	+12+ 17 + 26+ 28
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +19 + 22
Արագածոտնի նախալեռներ	+14 + 18 + 26+ 29

Արարատ	+14 + 19 + 30+ 32
Արմավիր	+14 + 19 + 20+ 22
Վայոց ձորի լեռներ	+11 + 13 + 20+ 22
Վայոց ձորի նախալեռներ	+13 + 15 +29 + 32
Սյունիքի հովիտներ	+12+ 16 + 32+ 35
Սյունիքի նախալեռներ	+10+ 13 +25 + 27
ԼՂՀ	+10+ 12 +23 + 26
Երեւան	+19+ 21 +25 + 27

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.6.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*